


Սմբատ Բիւրաս

Նմբագրութիւն «Փիիւնիկ», Ի Ալեքսանդրիոս



S. Burat
Rédaction «PUNIC»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՀՍԱՆ

Ն.Բ.Ը.
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑԱՄՍԵԱՅ 25

Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑԱՄՍԵԱՅ 8

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆՆԻԿ Է

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ ԲՈՎ. 6

ՓԻԻՆԻԿ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱՔԹԻ 23 ԱՊՐԻԼ 1902

ԹԻԻ 48

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Փիիւնիկի Բ. ՏԱՐԵՇՐՁԱՆԸ լրանալու մտ է, բայց Եգիպտոսի ու Արտասահմանի մեր բաժանորդներէն շատերը դեռ չեն վճարած իրենց այս տարուան բաժանորդագրութիւնը:

Շարաթաթերթիս հրատարակութիւնն ու առաքումը կանոնաւորապէս շարունակել կրնալու համար կը խնդրուի որ մեր Պատ. Բաժանորդները հաճին փութով հասցնել իրենց բաժանորդագրիւր ՄԱՆՏԱԲՕՍԹՈՎ, մեր հասցէին:

Այսքան կրկնումներէ ի վեր կը զարմանանք որ մինչեւ ցարդ եւ ոչ մէկ մանսարօս ստացանք մեր Պատ. բաժանորդներէն, որոնք սակայն կանոնաւորապէս կ'ստանան թերթը:

Կը խնդրենք որ ուշի ուշով կարգան այս ստիպողական, ստիպողական տողերը, եւ փութան մաքրել հաշիւներն:

Պուշկարիս, Աւերիկա, Ռոնսիս թէ Եգիպտոս, ո՛ւր որ կը գտնուին, փափագելի է որ շուտով եւ անյապաղ հասցընեն բաժանորդագրութեան չնչին պարտքը, որ կը կազմէ սակայն թերթին յարատեւութիւնն սպառնովոյ գումար մը:

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

ՏԻԳՐԱՆ ԵՐԿԱԹԻ

(Կարապետ Պիշեղիճի)

ԳԻՐՔ Բ.

Բ.

(Պայխար Յունաց մէջ)

Էթնիքի ՀիթիթիԱի կամ որ նոյն է Մալեդրոնական Գոլիթիին մէջ Տիգրան Երկաթին ընդունուիլը մ'ե՛ծ ու՛ժ մ'եղաւ, զոր անմիջապէս ծառայեցուց օգտին իր հայրենասիրական խորհուրդներուն, որոնց կարեւորագոյնն էր՝ համերաշխ գործողութիւն մը բաղադրել Հայերուն ու Յոյներուն միջեւ օտմ. կայսրութեան դէմ: Հաստատապէս կը հաւատար թէ երկու քոյր ազգերուն միացումը, շատ բնական, ապագային մէջ պիտի ապահովէր Արեւելքի մէջ իրենց մեծութեան յարութիւնը: Սակայն աւելի լաւ է որ, ի յայտ բերելու համար այս գեղեցիկ դաշնակցութեան—որուն առաջին ջատագովն ու հիանալի առաքեալն եղաւ ինք— ընծայած անվիճելի կարեւորութիւնն ու օգուտները, դիմենք ի՛ր իսկ սեպհական պերճախօսութեան, արտագրելով Աթենացիներուն ուղղած իր ճառէն մէկ

երկու հատուածներ ալ (1), որոնց մէջ խտացած կը գտնենք իր մեծ գաղտնիքը:

... «Բայց հայկական նաւահանգիստներուն մէջ, յունական նաւերը պիտի գրտնեն առատ նիւթեր: — Ինչպէս նախապատմական Ժամանակները, ձեր առագաստանաւերուն թիւովն ու արագութեամբը գուք ծովը կը բռնէք, մենք՝ Առաջաւոր Ասիոյ գետային մեծ ձամբաները: Մենք, Պարսկաստանէն մինչեւ Պոմպէյ, Մադրաս եւ Կալկաթա ձգուած Հնդկաստանի բանուկ ձամբան ենք: Արեւելեան գանձերուն փոխարէն զորս մինչեւ հոս բերելու համար, այսպէս ըսենք, ձեռքէ ձեռք կը նետենք, ձեզմէ պիտի ը՛գուենինք ձեր նորակերտ ճարտարարուեստի արտադրութիւնները: Աթենք պիտի գանք սովորելու արուեստը ձանրուն, նկարուած, քանդակուած, կառուցուած ձեւերուն, երգերուն հեշտոլոր դաշնակութիւնը, մարմինին յատուկ շարժումներուն թեթեւութիւնը: Մենք միշտ պիտի մնանք աւելի ծանրաշարժ ժողովուրդ մը: Կարծեմ թէ գուք աւելի արտայայտիչ կերպ մ'ունիք մեզ որակելու համար: Ասիացի մը հօհօհոս կ'անուանէք: Աստի, աւելի խորունկ կերպով պիտի սովորինք շատ մը մասնաւոր գիտութիւններ, որոնց վրայ գուք պիտի գաք, թերեւս, մեզի հետ մտածելու խաղաղաւետ ու խստակեաց մենաստանի մը ծոցը:

Ինչ մ'ալ թեւակոխենք դէպ ի ապագան: Տեսնենք Յունաստանը մեծցած, ստացած ամեն ինչ որ կը կազմէ հելլենական հողը կղզիներուն մէջ ու ցամաքին վրայ: Աթենք, իր աշխարհագրական դիրքովը գտնուելով հոն ուր կը խաչածեւեն ու կը վերջանան նաւարկութեան բոլոր գիծերը, որոնք դայն պիտի կապեն իր նոր երկիրներուն ու արտասահմանին. Աթենք պիտի մէկէն դառնայ մեծ շուկայ մը եւ, Արեւելքի գերազանցօրէն ակադեմական քաղաքը. դեղեցիկ քաղաքը, հոն ուսում առնելու համար: Ինչո՞ւ յիսուն տարիէն չը կրնանք վերածնիլ անկէ օգտուելու համար...:

(1) Անահիթի 1900 ի թիւ 3 եւ յետոյ միևնչեւ ցայսօր հրատարակուած թիւերէն եւ ո՛չ մեկուն մէջ գտնելով այնքան ընկիր քարգնանուած այս բանաստեղծական վերջին մասերն ալ—որոնց սակայն խօսացուած էր շարունակել հրատարակութիւնը — սխիպուեցանք մեկ քարգնանէ:

Մ. Խ.

Իրերու այս վիճակը պիտի չը կրնայ այսպէս հաստատուիլ ու տեւել եթէ ոչ օգնութեամբը դաշնակցութեանց, զորս հիմակուրնէ Յունաստանը պարտի հետապնդել. Արեւելքի կողմը, Բարբարոսներու դէմ — լեռներուն մէջ որոնք տեսան ծնելը Չմըշկիկին — Հայաստանը սնգամ մ'ալ ՊիՏի ԸԼԼԱՅ ՀԵԼԼԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՈՒԱՐԸ:

... Ժ. Դարը զարմանալի կերպով զուգորդեց այս զանազան ուժերը: Մեզմէ կախում ունի զանոնք նորէն միացնել մեր երկու ազգերուն մեծ օգտին համար: Մեզմէ կախում ունի մասնաւոր ազգութիւն տարածել մեր հայրենակիցներուն մէջ ու վեր բռնել փոխադարձ ուժացումներէն որոնք յաճախադէպ են ազգերուն, ինչպէս եւ անհատներուն կեանքին մէջ, վեր բռնել գծուծ շահերէն ու պատահական միջադէպերէն որոնք կարճատեւ մարդերու աչքին խոշոր կը թուին — Կաղափարը ՅՈՒՆԱՍՏԱՆԻՆ ՈՒ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ԲՆԱԿԱՆ ԴԱՇՆԱԿԵՈՒԹԵԱՆ:»

Հելլենական գոմիթէին մէջ պաշտպանեց կուսակիցները Թուրքերուն դէմ պատերազմի մը, որ կարելի պիտի դարձնէր ազատուելը Կրէտէին, Եպրոսին ու Մակեդոնիային: Միւս կողմէն, կուրին մէջ Հայերուն միջամտութիւնը պիտի անջատէր Սուլթանին բանակը, որ կարգով պիտի քայքայուէր Կրետացի, Մակեդոնացի ու Չեթուցի ապստամբներէն: Հռչակաւոր Առնասոյները նորէն պիտի երեւան դային Ելլադայի մէջ ու պիտի փառապանծօրէն կռուէին Անկախութեան հերոսներուն անմահական շունչովը: Պայթուցիկներն եւ ուրիշ շանթահարիչ սաղմոսաւեր նոր Գանաբիսներու, Միսուլիսներու, Դոմպաձիսներու, Գօնտուրիօսիսներու, եւն, առաջնորդութեամբ, սնգամ մ'ալ պիտի ակօսէին Միջերկրականը, խորտակելու համար Բարբարոսներուն զանդաղաշարժ փոխադրանաւերը, ազատելու կղզիներն ու Արշիպիղագոսը, ուր զեռ կը ծածանի թուրք դրօշակը. սպառնալու Սելանիկի ծովախորշին, պաշտպանելու Կիլիկիոյ եզերքները, թոյլատրելու դաշնակից Հայերուն որ զօրանան, սպառազինուին ու ընդարձակեն իրենց Չեթուցի ապստամբական գործողութիւնները: Այս վսեմ ձիգերը շուտով պիտի յուզէին Եւրոպայի մէջ հելլենասէքներն ու արդար դատերուն բոլոր պաշտպանները, որոնք օտարագրի ուժեղ լէգէոն մը պիտի

կազմէին խոյանալու համար, արի զօւսակօ- ներու հրամաններուն տակ, Յունաստանին ու Հայաստանին օգնութեան: Ու պատեհ վայրկեանին, հելլենական կանոնաւոր զօր- քերը պիտի տային վճռական մեծ հար- ուածը:

Էթնիքի ՀէթիթիԱՅի անդամները կը մշակէին այս ծրագիրները. զորս Տիգրան Երկաթ կը պաշտպանէր իր տաք ու հմտա- լից ջատագովականներով: Իր դատողու- թիւնը կը յարգուէր ու ինք մեծ կշիռ ու- նէր պետերուն մտքին վրայ:

Այս կերպով Հայաստանի պաշտպանու- թիւնը կարգադրելով ու զայն գնելով ըն- դարձակ, լուրջ ու մաթեմատիքական գոր- ծողութեան մը հողին վրայ, ուղեց հա- մաձայնիլ մեր յեղափոխական դասակարգե- րուն հետ ու այս մասին անոնց առջեւ դրաւ իր ազգային Մրապիբը, որ անոնց մէջ մեծ զղբում մ'առաջ բերաւ եւ որուն գոր- ծադրութիւնը — ըստ իր բուն բացատրու- թեան—«Գործերուն պիտի տուած ըլլար իրենց տրամաբանական լուծումը»:— Այս ծրագրին մէջ Տիգրան Երկաթ՝ Հայկական Հարցը, իր առաջին փուլէն, որ սոսկական խընդ- րանք մ'էր բարենորոգումներու — կը փո- խադրէր երկրորդ փուլին մէջ. «ԱՆԿԱՅՈՒ- ԹԵԱՆ ՀԱՄԱՐ ԿՈՒԻԻԸ Ե»:

Ուրիշ լեզուով, անի կ'ուզէր որ Հա- յերը, ա'լ չը հայցելով Տէրութեանց միջա- մբուութիւնը, ա'լ թողով իրենց խաղաղա- սիրական գիմումները Բ. Գրան բարենորո- գումներ ձեռք բերելու համար, ա'լ թողով իրենց խիստ քիչ օգտակար ցոյցերը Թուր- քիոյ մայրաքաղաքին մէջ, — որոնք նոյնիսկ ազգին ալ աղետաբեր են, ինչպէս փորձը հաստատեց, — վստահին իրենց սեփական կենսունակութեանը, իրենց սեփական մի- ջոցներուն ու իրենց ուժերը կեդրոնացնեն Մայր — Հայրենիքի նուիրական հողին վրայ, ուր պէտք է որ խիզախօրէն պարզեն ԱՊՍԱՄԲՈՒԹԵԱՆ գրոջակը, եւ մարդաս- պան կռիւներու մէջ նետուելով, փայլուն յաղթութիւններ տանելով կամ հերոսական մահը մեռնելով, պիտի վեհօրէն արհամար- հած ըլլան Եւրոպան ու Բարբարոսները ու հաստատած՝ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ հիմը:

Միեւնոյն շրջանին, թէ՛ իր գաղա- փարները տարածելու եւ թէ՛ շինելու հա- մար ժողովուրդին բարոյականը, զոր անի թուլցած կ'զգար ջարդերէն ետքը, խմբա- գրեց յեղափոխական բուն յայտարարու-

թիւններ, որոնց մէկ քանինները երեւցան Աթենքի Միուրիւն լրագրին մէջ:

Թէ Տիգրան Երկաթ ի'նչ քաղաքական լեզու կը գործածէր ժողովուրդին խանգը վառ պանելու համար, թարգմանենք այն հռչակաւոր յայտարարութեան քանի մը հատուածները ֆրանսերէն ընագրէն (Տես. Յրանս. Կենսագր. Էջ. 9):

«Փուժար մ'ընենք բոլոր ճիգերուն զորս մինչեւ ցայսօր փորձեցին մեր զա- նազան զօմիթէները: Պիտի գտնենք ընդ- հանուր արդիւնք մը, որուն համար համար- ձակ պիտի կրնանք ըսել թէ՛ Հայաստանի համար յաղթութիւն մ'է:

«Արդարեւ, բիրտ ուժով, Թուրքը մեղմէ վեր էր. իր ուժով, դրամը միասին, կրնար մեզ ջախջախել իր ուզած կերպով: Չա'ի պարտաւորեցինք մերկանալ Եւրոպային՝ իս- կական կացութիւնը որ մնանկի մը կացու- թիւնն է, այնպէս որ ա'լ չը կրնար կա- սավարել Արեւելքը:

Յետոյ, գործով արթնցուցինք անկա- խութեան զպցումը բոլոր քրիստոնէական- րուն, մինչեւ իսկ իսլամ ցեղախմբերուն մէջ, այնպէս որ Թուրքը, հիմակ ամեն կող- մէ պաշարուած է իրեն սպառնացող թշնա- միներէ:

Ամեն այս չէ: Հայկական դատը, զուրս ելած իր արեւելեան շրջանակէն, կը դրուի իբրեւ խնդիր Եւրոպային ու Ամե- րիկային առջեւ: Ահա՛ արիւնոտ ու ողջ Հայաստանը վեր կը ցցուի ցամաքներէն հրաւիրելու համար ազգերը որ շարուն- աշխատանքի արտադրիչներուն կամ աւե- րիչներուն կողմը: Աշխարհի պատմութեան ամենալուրջ էջերէն մէկն է որ պիտի գըր- ուի մեր արիւնով: Հիմակուրէն հպարտ օրէն կրնանք հաստատել թէ՛ Հայաստանը, լայ- նաւայն չափի մը մէջ, պիտի նախագահէ Ի. դարուն քաղաքական ու բարոյական բաղ- դերուն:

Հայկական ողբերգութիւնը բնաւ չէ՛ վերջացեր: Լոկ առաջին արարը խաղացինք, կը մնայ մեզի խաղալ երկրորդը, որ է նետ- ուիլ մեր հայրենիքն ու ձեռքերնիս գէն- քեր՝ տիրանալ անոր:

Մի՛ մեզի ըսէք թէ չափէն աւելի կո- ըուսաներ տուինք: Իրաւ այնչափ տգէ՛տ էք որ հաւատաք թէ մեր անկախութիւնը պի- տի իրագործուի Փերմանենտու եւ բանակ- ցութեանց խաղաղասիրական ճամբով. . . : Արիւնի ալիքներու եւ կրակի հարուածնե-

բու մէջէն, քան ջախջախիչ պարտութեանց
յաջորդող մէկ երկու երեք յաղթութիւն-
ներէ ետքն է որ հարիւր տարիէ ի վեր
կազմուեցան Միացեալ Նահանգներուն Ա-
մերիկան, Հար. Ամերիկային 15 Հանրապե-
տութիւնները, Յունաստանը, Ռուսաստան,
Սերպիան, Իտալիան, Պուլկարիան:

Եւ սակայն, ունի՞նք իրական կորուստ-
ներ: Երբ որ ոչինչ կը կորսուի անկենդան
բնութեան մէջ, կրնա՞ք մտածել թէ 150
հազար Հայերու արիւնին չափ կարեւոր
դատ մը պարագըր գացած ըլլայ, Չէ՞ք զգար,
այս արիւնը կ'ապրի, մեր երակներուն մէջ
անցած է. մեր բազուկներն ուսեցուցած է,
մեր թմբած սիրտերը բոցավառած է, մեր
ըզեղներուն մէջ բերած դրած է առնացի
մտածումներու կորովը, մեզ նոր մարդեր
մկրտած է:

Գիտնանք տեսնել մէն մի ատրիւտյթ
չարիքի տակ պահուած բարիքը: Մեր ան-
հատակէն տառապանքները՝ չարիք մը չեն
ազգին համար, ընդհակառակն կ'օգտուի
անկէ:

Հողին տակ պտուկած արիւնոտ մար-
միններէն ամեն մէկը քարի հատոր մ'է որ
Հայաստանին հիմքը կը կազմէ: Միշտ այս
կերպով ու ամեն տեղ կը կանգնեն հայրե-
նիքին պարիսպները:

Բոլոր այս քաղաքական գործունէու-
թեան մէջ լրջօրէն զբաղեցաւ նաեւ Յունաս-
տանի հայ դադթականութեան բաղդովը,
հելլենական կառավարութեան դիմումներ
ըրաւ, երկրին մէջ անոնց վերջնական կամ
առժամապէս հաստատուիլը կարգադրելու
համար: Յաճախ կ'այցելէր անոնց վրանները,
զանոնք կը քաջալերէր փրկաբար խօսքեր
կամ օգտակար խրատներ ուղղելով անոնց:
Ասոնք հլու հնազանդներն էին անոր, շատ
կը սիրէին զանի ու կը յարգէին: Ինք ու
իր բարեկամները յաջողեցան այս թշուա-
ներէն մեծ թիւ մը տեղաւորել Աթինքի
ու Նահանգին քանի մը գլխաւոր քաղաք-
ներուն մէջ:

Լոնտոնայի Գօմիթէն (Հնչակեան) այս
գաղթականները կրպորոս փոխադրել տալու
մասին՝ առաջարկներ հաղորդած էր. Տիգ-
րանի խիստ յաջող թուեցաւ այս լուծումը:


«Այն կղզիին մեջ, կ'ըսէր, պայծառ
օրին մեկը պիտի կրնան նշմարել Աւետեաց
Երկրին եզերքները:»

(Շաբուկապետ)

Ս. ԲԻԻՐԱՏ

Թ. Ղ. Ա. ԿՅՅՈՒԹ Ի ԻՆ

ԷՍԹ ՌԻԷՍԹԻ



Բարից 12 Ապրիլ 1902

Բարիցի Հայոց կեանքէն. —

Երեկ՝ հինգշաբթի տեղի ունենա-
լու էր պ. պ. Իսկենտէր-Գալիպօճեա-
նի դատին վերաքննութիւնը Բարիցի
վերաքննիչ ատեանին (Cour d'Appel)
առջին: Երկու դատավարները որոշեալ
ժամերուն ներկայ գտնուած են ար-
դարութեան պալատին մէջ սպասելով
որ իրենց կարգին դատուին: Սակայն
դատաւորներն այնքան գործ ունին ե-
զեր այդ օրը դատելու, որ մեր երկու
հայերուն լսւր կը տրուի թէ իրենց
խնդիրը յետաձգուած է ութ օրով:
Աւրեմն ութ օրէն դարձեալ պիտի խօս-
ուի հայոց մասին Բարիցի... դատա-
րաններուն մէջ!

* Ժամանակին ծանուցինք նաեւ
թէ այս շաբթու՝ Ապրիլ 11ին Բարիցի
կրանիթ - Օրիանի մեծ դահլիճին մէջ
տեղի պիտի ունենար Բարիցի Հայոց
գաղթականային մէկ ժողովը: Մեզ կ'ի-
մացնեն թէ այդ ժողովը ալ յետա-
ձրգուած է: Այդ առթիւ երեկ հե-
տեւեալ տպագրուած տոմոն ստացանք:

«Տեր, 1902 Ապրիլ 11 ի Ուրբաթ
իրիկունը «Կռան ք'Օռիան»ի մէջ
(Grand Orient 16, rue Cadet) կասարուե-
լիք նախապէս ձեռք ծակուցուած ա-
ռանձնական գումարուք, կարևոր ա-
սեկախօսի մը յանկարծական հիւան-
դութեան պատճառաւ, յետաձգուած է:»

«Միտենոյն գումարուք սեղի պի-
սի ունենայ մօտ օրէն, որուն թուա-
կանը եւ սեղը ձեռք պիտի ծակուցուի
վերսիս:»

Բարից 8 Ապրիլ 1902 Մ. Գալիպօճեան
Ինչպէս կը տեսնէք Բարիցի հայեր
անգործ մնալ չ'են սիրեր...»

* Վերևի տոմսակին մէջ յիշուած հիւանդացած ատենախօսը, մեզ կ'իմացնեն թէ, պ. Լեոն Փաշալեանն է։ Այդ պարոնն որ իբր հրապարակագիր յայտնի է արևմտեան հայ մամուլին մէջ, կըսեն թէ 8-10 օրերէ ի վեր կը տառապի աղիքներու բորբոքումէ մը, երեք օրերէ ի վեր՝ իւր բարեկամներէն հայ բժիշկի մը շնորհիւ մտած է հիւանդանոց։ Կըսուի թէ պարոն Փաշալեանի վիճակը բաւական ծանր է և գուցէ պէտք լինի զայն վիրաբուժական գործողութեան մը ենթարկել։

Կը յուսանք թէ մասնագէտներու և հայ բժիշկներու մշտական խնամքներու շնորհիւ յարգելի գրագէտը քիչ օրէն հիւանդանոցէն դուրս կ'ելլէ ապաքինած և ամէն վտանգէ զերծ։

* Մեզ կ'իմացնեն թէ անցեալ շաբթու Լոնտրայէ Բարիզ եկեր են Անկլօ-Արմէնիըն (Անգլօ-Հայկական) միութեան անգամներէն մի քանի հոգիներ և ճաշի հրաւիրեր են բարիզաբնակ Հայերէն մի քանին։ Երկու օր յետոյ հայերն ալ, քաղաքավարութեան համար, անգղիացիները ճաշի հրաւիրած են։ Այս հացկերոյթի ժամանակ բնականաբար «կենացներ առաջարկուած են և փոքրիկ ճառեր խօսուած են։ Ներկայ գտնուող Հայերէն մէկն ալ ուզեր է ճառ մ'արտասանել, ու արտասանած է և անգղիացի հիւրերու առջև Անգղիան վարզարնելու և անոր քաղաքականութիւնը հայկական խնդրոյ առթիւ, քննադատելու... քաջութիւնն ունեցած է!! — սակայն ինքն ալ քանի մը հեռատես և հիւրասիրութեան յարգը ճանչցող Հայերու կշտամբանաց արժանացեր է։

Թուրք Ուսանողները.

* Թուրք ուսանողներու խնդիրը գեռ չի վերջացաւ, անոնք գեռ իրենց ամսականին կըսպասեն և այնպէս կը կարծեն անոնցմէ ոմանք թէ գեռ շատ

երկար ժամանակ ալ սպասելու են, վասն զի հակառակ դեսպանատան կամ աւելի ճիշդ դեսպանին ըրած խօստու մին, մինչև օրս, ամսական ստացողներէն և ոչ մին իւր ամսականը ընդուներ է։ Հրաշալի պետութիւն և հրաշալիագոյն դեսպանատուն... Կառավարութիւնը ետ կը կանչէ թուրք ուսանողները. ըսե՛նք կամ ենթադրե՛նք թէ այդ իւր իրաւունքն է... Բայց դեսպանը թոյլ չտար նոյն այդ թուրք ուսանողներուն Կ. Պոլիս վերադառնալու, այս ալ դեսպանատան իրաւունքն է։ Եթէ կրնանք բան մը հասկնալ հասկըցէք այս եղերերգական — կատակերգական գրութիւնէն։

O, dolce Turcia, o, sol beato!

ՔՐՈՆԻԿ

Ա Ա Ղ Ա Յ Յ Ն

— ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԺԱ. ԳՕՆԿԻՆ Մօնագօ գումարուեցաւ ամսոյս սկիզբներէ։ Երկու հարիւր յիսուն անգամներ բոլոր ազգերը ներկայացնող, արձանագրուած էին Գօնկրէին համար, որուն աշխատութիւնները տեսցին մինչեւ կիրակի Ապր. 6 :

Առաջին նիստը բացուեցաւ ամսոյս 2ին չորեքշաբթի օրը ժամը 9ին, սրահներէն մէկուն մէջ նոր ովկիանագրական բանգարանին, որ Միջերկրականի վրայ իբխող Մօնագոյի ապառաժին բարձունքը կառուցուած է :

Մօնագոյի իբխանը ներկայ եղաւ առաջին նիստին, որուն կը նախագահէր Տ. Կասթօն Մօֆ, գօնկրէին կազմակերպիչը, որ եւ արտասանեց բացման հառը :

Գ. օրուան նիստին օրակարգն էր Հայկական հարցին վրայ վիճարարութիւնը։ Տ. Բիւր Բիւրտար, միեւնոյն

— ՏԻԱՐ ԱՐՄԵՆԱԿ ՊԵՏԼԷՐԵԱՆԻ ծխախոտի նոր դործարանին բացումը որ տեղի ունեցաւ ամսոյս 21ին Գահիրէ, Պուլպպի ճամբուն վրայ, կը նշանակենք ուրախութեամբ եւ մեր խնդակցութիւնները կը յայտնենք:

— Տ. Ս. ՊԵՆԼԵԱՆԻ ամսոյս 19ին իրեկունը տուած Սանդուխտի ներկայացումը բաւական յաջող անցաւ, մանաւանդ կասկախազր: —

— Ն. Վ. ՊՕՂՈՍ ԲԱՇՍ. ՆՈՒՊԱՐ, տեղացի ու օտար քանի մը թերթերուն հրատարակութեան հաստատ, պիտի մօտերս կարգուի ՆԱԽԱՐԱՐ ՀԱՆՐՕԿՈՒՑ ՇԻՆՈՒԹԵԱՆՑ (Travaux-Publics):

Եգիպտոսայերուս ա՛յնքան պատուաբեր որքան ուրախառիթ ալս լուրը կը հըրատարակենք առ այժմ վերապահումով, սպասելով պաշտօնականին:

ՆՈՐ ԳՐԹԵՐ

Շնորհակալութեամբ ասացանք.

— ԶԷՅԹՈՒՆԻ ԱՆՑԵԱԼԷՆ ԵՒ ՆՆՐ-ԿԱՅԷՆ — Զէյթունցիև գրքին Ա. Մար. Վ. Իեննա Մ իւրբարեան Տպարանէն, 1900:

Այս գիրքը կը բաղկանայ 160 մեծադիր էջերէ. յառաջարանով, նախագիտելով, ու ԼԹ. գլուխներով: Կը պարունակէ Զեթուն գիւղաքաղաքին քաղաքը, Զէյթունի ու Զէյթունցիի մը պատկերը, նաեւ պատմութիւնը: Նախագիտելիք բանական տեղեկութիւններ կուտայ Զէյթունի բնական դիրքին, սահմաններուն, բնակիչներուն, անոնց բարեբուն ու սովորոյթներուն վրայ, նաեւ Զէյթունի իշխաններուն, եպիսկոպոսներուն հակիրճ ազգաբանութեամբ մը: Ուրիւ առթիւ մը պիտի խօսինք այս ընտիր երկասիրութեան վրայ: Գիտն է Եգիպտոսի նամար 16 դրու ողջ, ու Արսասահմանի նամար 4 ճր. Դիմել մեր կամ հետեւեալ հասցէին.

Rev. Père Bartholinéos Takadjian
Eglise arménienne Alexandrie (Egypte)
Կանխիկ է վճարումը, հնչուն կամ մանսաբոսով:

— ԱՂ.ՔԱՏԻՆ ՊԱՏԻԷԸ կամ ՆԱԽԱ-
ԽՆԱՄՈՒԹԵԱՆ ՄԱՏԸ. (Իրական վեպ)
հեղ. Ս. Շալի Մ. Այթունեան. ՀԱՏՈՐ Ա.
Ա. — Դ. Գահիրէ. Տպ. Ս. Դարբինեան
1902:

Ձր հայելով ինչ ինչ թերութիւններուն, իբրեւ գրական գործ մը, — ինչպէս որ մասնաճած է յարգելի հեղինակը — այս հասորը կենդանի պատկերացում է Խաղճ՝ դի ընտանեկան կեանքին ամենախոր ու սե կողմերուն: Գիտն է 5 դրու ողջ Եգիպտոս.

Ամերիկա գաղթող Խարբերոցի երիտասարդները բերին խմբագրութեան հետեւեալը, գոր կը հրատարակենք յի գիտութիւն գաղթողներուն ու իրենց ազգականներուն:

11 Ապրիլ 1902 Աղեքսանդրիա

Սրբելի ազգակիցներ, երբ մենք հոս եկանք երեսուն եւ երկու հայ էինք: Տաճկաստանէն հայրենի տներնիս, զաւակներնիս, ընտանիքնիս, քոյրերնիս, ու եղբայրնիս ձգած, փախուստի դիմած էինք՝ ինչպէս շատերնուդ արդէն ծանօթ է, ստիպուած էինք փախուստի դիմել, գոնէ կեանքերնիս փրկելու ու պանդխտութեան մէջ ապրուստ ձարելու համար, բայց չինայելով այն բանի վրայ, որ մէջերնիս տասն եւ երկու տարեկան տղաքներ կային, ու կային նաեւ չորս հինգ անգամ բռնուած, ու շղթայակապ, Հայաստանի բանտերուն մէջ երկար ատեն տառապելով հարիւր քսան օրերէ վեր դարձած եւք հայրենիք, կրկին բաղձանքնու չի հասած: Երբ որ Աղեքսանդրիա եկանք չունէինք մէկ դահեկան որ կարողանայինք մէկ մէկ պատու հաց առնել:

Բայց, ո՛րքան բարեբաղդ էր այն բուստի երբ հանդիպեցանք գթալի ու մարդասէր անձի մը, որուն անունն էր Յակոբ աղա Մաղաֆեան, որն մեր ամեն տրամութիւնները հեռացուց մեր վրայէն, երբ որ մենք բարբոսներն յուսահատած էինք մեզի:

երկիրը բոլորովին անձանօթ ըլլալուն համար, ու շողենաւէն հանելով սարաւ, սենեակներ բռնելով մեզի հանգստացուց, ու նոյն օրը մեր ամենուս հեռագիրը զարկաւ դէպի Ամերիկա, որպէս զի դրամներս գայ, ու ամբողջ ծախքերը վճարելէ վերջ, միանգամայն հացագործը ցուցուց որպէսզի իւր անունով երթանք ամեն օր հաց առնենք, միւս օրը մեր հագուսար փոխեց ու մեզի ամեն մէկերնուս ծախքերու համար ամեն օր դրամ բաշխեց, մինչեւ որ մեր դրամները եկան: Ու կրկին միասին եկաւ ու պանքայէն ամենուս դրամները առաւ, ու առանց մէկ ստակ անգամ խարդախութեան, մեր ստակները մեզի տուաւ, ու ահա այս օր որ կը մեկնիմք մեր ամեն պետքերը հոգալով ճամբայ կը գնէ, չունենալով ուրիշ փոխարինութիւն կուզանք հրապարակաւ շքնորհակալութիւններ յայտնել: Միայն կ'ստորագրենք քանի մը հայտնիս խառնակ չըլլալու համար:

Վարդերէս Գրիգորեան, Մարտիրոս Յակոբեան, Աւագ Յարութիւնեան, Խաչատուր Իսէփեան, Կարապետ Կուլխասեան, Առաքել Թումաճանեան, Գրիգոր Տ. Կարապետեան, Կարապետ Ըռայիսեան, Խաչատուր Ըռայիսեան, Պողոս Յարչիկեան, Մկրտիչ Թօրօյեան, Մանուկ Գողջօյեան, Սահակ Կարուկեան, Գրիգոր Խորտիկեան:

ՉԱՏԿԱԿԱՆ ՕՐԵՐՈՒՆ ՏՊԱՐԱՆԸ ՓԱԿ ԸԼԼԱԼՈՒՆ ՅԱՌԱՋԻԿԱՅ ԴՇ. ՕՐԸ ՓԻԻՆԻԿ ԶԸ ՊԻՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ:

ՀՍՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐՈՒՆ

Սուրիացի հայ երիտասարդ մը, սուրիներէ ի վեր եգիպտոս հաստատուած, եւրոպայական քանի մը լեզուներու հմուտ, ու քաջ սուրբագէտ միանգամայն, պատաս է վաճառականաց արաբերէն թղթակցութիւնները կատարել գոհացուցիչ պայմաններով:

Մանրամասնութեանց համար դիմել Խմբագրատունս կամ «ԱՐԱՔՍ» ի սպարանք:

SALAMANDER

ՍԱԼԱՄԱՆՏԸՐ

Ապահովագրական Ընկերութիւն ընդդէմ հրդեհի.

ԱՄՍԹԵՐՏԱՄ

Իրամագլուխ 3,125,000 ֆրանկ

Ամեն կերպ Ապահովագրութիւնք կ'ընդունուին ընդդէմ հրդեհի ինչպէս նաև Մովային, Գետային և Ցամաքային փոխագրութեանց արկածներու դէմ.

Իւրամատչելի գներ և պայմաններ

Իիմեյ առ Ընդհանուր Գործակալ ևս Լիպգոր-Փոխանորդ

ՄԻՀՐԱՆ ԳԱԼՅԱՆԱՆ

Աղեփասանորիա, պզտիկ Մեկշիե Ապոստոսա փողոց թիւ 10

L'ALLIANCE

Լ'ԱԼԻԱՆՍ

Մովային Ապահովագրական Ընկերութիւն.

ՊԵՐԼԻՆ

Իրամագլուխ 5,000,000 ֆրանկ